Սույն գիրքը թվայնացվել է Գրքասեր ՀԿ-ում՝ հայերենով գրականության պահպանման, հանրայնացման և ժամանակակից թվային միջավայրում հասանելի դարձնելու նպատակով:

Կազմակերպության նախաձեռնությունը միտված է հայերեն գրքերի և տեքստերի տարածմանը, ընթերցանության խթանմանը և մշակութային ոչ նյութական ժառանգության պահպանությանը՝ ապահովելով դրանց հասանելիությունը հնարավորինս լայն շրջանակների համար:

Մենք հավատում ենք, որ թվայնացումը ոչ միայն պահպանման միջոց է, այլև գիտելիքի, գրականության և մշակույթի շարունակական փոխանցման կարևոր ուղի:

Գրքասեր ՀԿ-ն գրքերը ձայնագրում և թվայնացնում է բացառապես Ձեր նվիրատվությունների շնորհիվ: Կազմակերպությանը կարող եք օժանդակել հետևյալ հղումով՝

https://grqaser.org/hy/donate

Ստուգված
Էստոնական գրականություն, Պատմվածք, Արձակ
13+
Թարգմանիչ՝ Վարսենիկ Եսայան

Էլար Կուուս
Մեռելախոտը

Ամբողջ այս պատմությունը, ըստ էության, սկսվել է անցյալ դարի երկրորդ կեսին, երբ հարավային Էստոնիայի Մեերյան դաստակերտի մի խումբ գյուղացիներ եկան բարոն ֆոն Զեյդլիցի մոտ բանակցության: Գյուղացիք իրենց խոսքն առաջ էին տանում անշտապ, բայց հաստատուն, իբր հայրենիքն իրենց համար թեև թանկ է, բայց ապրուստն այստեղ շատ աղքատիկ է: Եվ թող ամենաողորմած պարոնը թույլ տա տեղափոխվել Պոդոլսկի նահանգը, որտեղ պայմաններն անհամեմատ ավելի ազատ ու արձակ են:
Բարոն Զեյդլիցը գյուղացիներին լսեց լուսամուտից և համաձայնություն չտվեց, պարզապես նրանց հայհոյեց, սկզբում այն բառերով, որ ինքը էստոներեն գիտեր, իսկ հետո նաև այն բառերով, որ նրան հուշում էր հենց այդտեղ նրա կողքին կանգնած կառավարիչը: Բայց գյուղացիք չհանգստացան: Նրանք խնդրագիր կազմեցին և հանձնեցին Ռիգայի գեներալ-նահանգապետին: Սույն տիրակալը նրանց տվեց պահանջվող անցագիրը, նկատի ունենալով այն քաղաքականությունը, որ վարում էր ցարական կառավարությունը՝ ամայի հողատարածությունները բնակեցնել «այլազգի» և «այլախոս» ժողովուրդներով: Եվ այսպես, Մեերյան դաստակերտի ձեռներեց գյուղացիները կարող էին այժմ հավաքել իրենց աղքատիկ ինչքը և իրենց բազմաթիվ զավակներին տեղավորել սայլերին: Հորթերին ևս կապելով սայլերին, նրանք դանդաղորեն շարժվեցին դեպի Նիո կայարանը, որպեսզի շարունակեն իրենց ուղևորությունը հենց նոր կառուցված Տապա-Ռիգա երկաթգծով:

Մեծ թվով ձրի բանվորական ուժից զրկված բարոն Զեյդլիցը ոչ մի այլ բան մտածել չկարողացավ, քան հրամայել իր սենեկապետ Անտս-կատակասերին՝ թքել հեռացողների հետևից: Անտսը քարշ էր գալիս վերաբնակների հետևից և հնազանդորեն թքում: Դաստակերտի սահմանի վրա նա հանգիստ շուռ եկավ և տուն վերադարձավ: Սակայն պարոնի զայրույթը դրանով չմեղմացավ: Պոդոլսկի նահանգի նահանգապետ Զիբուլ-Ղրիմցուն ֆրանս-ռուսերեն խառնալեզվով մի գրություն ուղարկեց, որի մեջ հաղորդում էր, թե Պոդոլսկ կժամանի խռովարարների մի

հրոսակախումբ, «Բոլորը սրիկաներ ու անզգամներ», որոնց հարկավոր էր ուղարկել «գրողի ծոցը»:

Նահանգապետ Զիբուլ-Ղրիմցին, գերադասելով խուսափել ցարական արքունիքի մերձբալթյան ազդեցիկ ու մեծատոհմիկ անձի հետ տարաձայնություններից, ստացված ուղերձի լուսանցքում նշեց. «Ի կատարումն» և ուղարկեց Բրացիսլավայի իր ստորադաս գավառական կառավարչին:

Վերջինս, սեղանի մոտ նստած ստացված գրության վրա խնամքով մակագրում էր, բծախնդրորեն հետևելով, որ իր գրածը թեկուզև կարճ, բայց ավելի նրբագեղ ստացվի, քան նրա կողքին գտնվող նահանգապետի մակագրությունը:

Հանկարծ նա դիմեց քարտուղարին.

— Լսիր, իսկ իմ գավառում այնպիսի տեղ կգտնվի՞, որ նման լինի «գրողի ծոցին»:

Պետական փաստաթղթերի կույտի հետևից երևաց քարտուղարի նեղ գլուխը:

— Ինչքան ուզեք: Օրինակ՝ Հարավային Բուգի միջին հոսանքի մերկ տափաստանը: Այնտեղից մինչև ամենամոտիկ Զապոյե գյուղը յոթանասուն վերստ է: Հե-հե՛:

— Ինչ յոթանասուն,— կառավարիչը նայեց պատի աշխարհագրական քարտեզին:— Միայն Զապոլեից յոթ վերստ կլինի:

— Յոթ կլինի ուղիղ գծով՝ Վադիմսկի հովտով: Բայց չէ՞ որ այդ հովիտը բոլորովին անանցանելի է: Հե-հե՛:

Եվ այսպես, էստոնական վերաբնակներին ուղարկեցին ապրելու Վադիմսկի հովտի և Հարավային Բուգի միջև ընկած տեղանքը: Այստեղ ժամանելով խստաշունչ հյուսիսից, որտեղ ստիպված էին պայքարել գիշերային ցրտահարությունների դեմ և ուղղակի մատներով նվազ հողից դուրս կորզել իրենց ապրուստը, նոր ապաստանում նրանք, ընդհակառակը, շատ լավ բաներ հայտնաբերեցին: Օրինակ՝ երկարատև տաք ամառ և պարարտ սևահող: Տափաստանը, որ գարնանը բոցավառվում էր ծաղկած վարդակակաչներով, հիացինտով ու տուլտավարդերով, որոնք դեպի կապույտ երկնակամարն էին ձգում իրենց կոկոնների ծաղկաբույլերը, բնական արոտավայր էր, և անասուններն սկսեցին արագորեն բազմանալ: Մշակվող խոպանում տարեկանը պատի նման էր բարձրանում, և շուրջը բուսնում էին վերաբնակների կավածեփ հյուղակները:

Սակայն շուտով պարզվեց, որ նրանց հատկացված վայրը իսկապես որ «գրողի ծոց» է: Գլխավոր դժբախտությունն այն էր, որ ստրկությունը, որից փախել էին, նրանց հետևից հասել էր նաև այստեղ, այս տափաստանը, ընդ որում տուրքերը տարեցտարի շարունակ ավելանում էին: Տուրքեր էին կորզում և պետությունը, և գավառական իշխանությունը, և տեղական կալվածատերը, թեև վերջինս նրանցից բավական հեռու էր գտնվում:

Եթե հարկերը մի կերպ հատուցվում էին համառ աշխատանքով, ապա մյուս ձախորդության դեմ այստեղ միջոց չգտնվեց: Դա Վադիմիսկի անանցանելի հովիտն էր, որը բնակավայրն անջատում էր Զապոյեից՝ ամենամերձավոր գյուղից և առևտրական կենտրոնից: Երբ հարկավոր էր լինում հացահատիկ ու միս ուղարկել շուկա, հիվանդի մոտ բուժակ բերել, մանգաղ կամ ասեղ գնել, պետք է շրջանցեին հովիտը և վերադառնային անվերջ երկար թվացող յոթանասուն կիլոմետրը՝ տափաստանային դժվար ճանապարհներով, որոնք ամռանը հեղձուցիչ փոշով էին պատած, աշնանը՝ ճանճատիղմով ու ցեխաջրով:

Բայց ամենամեծ դժբախտությունը, թերևս, երրորդն էր՝ գավառի մյուս բնակիչների՝ ուկրաինացիների վերաբերմունքը նորաբնակների հանդեպ: Այդ գործում գուցե իր նոր ծառայությունն էր մատուցել բարոնի զրպարտչական գրությունը, որի բովանդակությունը բերնեբերան էր անցնում, կամ մեղավոր էր լեզուների տարբերությունը, իսկ հնարավոր է նաև իրենց՝ էստոնացիների անմտության հասնող ներփակությունը, այսպես, թե այնպես,

ուկրաինացիք նրանց նայում էին որպես օտարերկրյա հրեշների, և երբ նրանք գալիս էին Զապոլյե, երեխաները շարունակ խմբովին վազում էին նրանց հետևից և բղավում. «Չուխնա, չուխնա»: Կրպակներում նրանցից յոթը կաշի էին քերթում, գյուղերում ջուր չէին տալիս խմելու և պատահում էր, որ նույնիսկ շներին քսի էին տալիս նրանց վրա:

Էստոնացիք էլ իրենց հերթին դրան պատասխանում էին թշնամանքով: Երկու բնակավայրերի միջև թշնամանքն այն աստիճանի հասավ, որ էստոնացիք ուկրաինացիներին այլ կերպ չէին անվանում, քան «անիծյալ խոխոլներ»:

Մարդիկ մեռնում էին, և նորերը ծնվում էստոնական այդ բնակավայրում: Երիտասարդ սերնդի մեջ հասակ առա նաև ես:

Դեռ տասներեքամյա հովիվ էի, երբ ամառային մի օր մեր գյուղին վրա տվեց հեծյալների մի ջոկատ՝ զինվորական համազգեստներով, կարմիր գագաթնամաս ունեցող գդակներրով, գոտիներից կախված կարճ մտրակներով: Ծերունիները ճանաչեցին ժանդարմներին: Առջևից սլանում էր քմծիծաղ տվող մի կարճլիկ սպա, իսկ նրա կողքից՝ երկար, կեռ թուր կախած մի հաստ, մռայլ ուրյադնիկ: Սպան ձին կանգնեցրեց մեր տան մոտ, թաշկինակով սրբեց իր քրտնած պարանոցը և ասաց.

— Տոթ է:

Ուրյադնիկը ձեռքը նետեց հովարին և, աչքերը չռելով, ամբողջ ուժով ծղրտաց.

— Ճի՛շտ այդպես, ձերդ գերազնվություն, տոթ է:

Ժպտացող փոքրիկ սպան ծոցագրպանից հանեց ոսկե շրջանակով պենսնեն, դրեց քթին և նայեց շուրջը: Երեխաները վազեցին նրանց մոտ, մեկը մյուսի հետևից շտապ եկան նաև չափահաս գյուղացիք, բախտի քմահաճույքին թողնելով իրենց գործերը: Այստեղ առաջին անգամն էին հեծյալ ոստիկաններ տեսնում:

— Բերեք նրանց,— ասաց սպան:

— Ճի՛շտ այդպես, ձերդ գերազնվություն, բերե՛լ:

Ուրյադնիկը ձիուց ցած թռավ և մոտեցավ նորաբնակներին:

— Ձեզանից ո՞վ է Ռոստիսլավ Վոյտինսկին, նախկին յասավուլը:

Պատասխան չեղավ:

— Ձեզանից ո՞վ է Ռոստիսլավ Վոյտինսկին: Եվ հետո նաև...— Ուրյադնիկը բաց արեց թուղթը, որի վերին եզրին աչքի էր զարնում երկգլխանի արծիվը, և կարդաց ութ անուն ևս:

Վերջապես առաջ եկավ հայրս: Նրա մի ձեռքին հեսանաքարն էր, մյուսով սղալում էր մորուքը, որը քիչ առաջ խուզող մկրատով կարճացրել էր: Զինվորական ծառայությունը նա Խարկովում էր անցկացրել, դրա համար էլ բավական կարգին ռուսերեն էր խոսում:

— Դուք տեղը շփոթել եք,— բացատրեց նա:

— Սա մի՞թե Զապոլյեն չէ,— հարցրեց ուրյադնիկը:

— Ոչ, սա ազնիվ էստոնացիների բնակավայրն է: Նրանք, որոնց դուք որոնում եք, խոխոլներ են, մեզ համար նրանք օտար են և ապրում են Վադիմիսկի մյուս կողմում:

Սպան նշան արեց ուրյադնիկին: Սա անճոռնի, օրորուն քայլվածքով վազ տվեց ձիավորների մոտ և, նրանց դես-դեն քշելով, դուրս բերեց լայնակուրծք չալ մի ձի: Ձիու վրա նստած էր գլուխը բաց մի պատանի: Համազգեստային սպիտակ վերնաշապիկը և գոտու ճարմանդի վրայի տառերը վկայում էին, որ նա գիմնազիստ է: Ձյութի պես սև գանգուր մազերը ընդգծում էին դեմքի գունատությունը:

— Գրիցկո՛, ի՞նչ է նշանակում սա,— դիմեց սպան հեծյալին: Նրա դեռ ժպտացող դեմքին կարմիր բծեր երևացին: Պատասխանի չսպասելով՝ նա ճանկեց թամքից կախված կաշվե մտրակը և սկսեց ծեծել տղային:

Չնայած շաչող հարվածներին, պատանին նստած էր ձեռքերը հպարտորեն կանթած և շուրթերն ամուր սեղմած: Սակայն վերջիվերջո նա չդիմացավ և թամբից ընկնելով խուլ ձայնով թրմփաց գետնին:

Սպան լարումից հևասպառ էր լինում: Քրտնած պարանոցը սրբելով, նա նշան տվեց: Ջոկատն ինչպես որ երևացել էր, այնպես էլ հանկարծ անհետացավ: Ճանապարհի վերևում լողացող փոշու ամպը գնալով հեռանում էր: Իսկ մեր առաջ գետնին փռված էր այն խոխոլներից մեկը:

Սկզբում, երբ հայտնվեց գիմնազիստը, հայրս արհամարհանքով նայեց նրան: Բայց մարմնական պատժի ընթացքում տեսնում էի, թե ինչպես էր ցնցվում հայրս և ավելի ու ավելի ամուր սեղմում հեսանաքարը: Երբ ձիավորները արշավասույր հեռացան, նա առաջինը մոտեցավ պատանուն, որ գետնից բարձրացնի: Այժմ արդեն բոլորը տեսան, որ դա փոքր տղա էր, իմ հասակակիցը:

— Դեռ երեխա է,— դուրս թռավ նրան շրջապատող գյուղացիների շրթներից:

Հայրս նրան գրկած տուն տարավ: Մի քսան րոպե հետո նա վերադարձավ, և մեր վերաբնակները լսեցին այն, ինչ տղան էր պատմել նրան:

Երկրում ապստամբություն էր բռնկել ցարի և կալվածատերերի դեմ. դա 1905 թվականն էր: Ցարական իշխանությանն այնուամենայնիվ հաջողվեց ապստամբությունը ճնշել, քաղաքներում իր իշխանությունը ամրապնդել և այնտեղից գյուղերն ուղարկել պատժիչ ջոկատներ, որոնք գործում են կալվածատերերի ցուցումներով: Նահանգական Կամենեց-Պոդոլսկ քաղաքից ժամանելով, ժանդարմների ջոկատը պետք է ուղևորվեր Զապոլյե և, որպեսզի տափաստաններում չմոլորվի, նրանք գավառական Բրացիսլավ քաղաքում իրենց հետ վերցրին այդ վայրերում ծնված գիմնազիստին: Այդ գիմնազիստն էլ հենց Գրիցկոն էր: Ճանապարհին տղան լսեց, որ հեծյալ ջոկատին հրամայված է իր հայրենի գյուղում գնդակահարել նրա հորեղբայր Ռոստիսլավ Վոյտինսկուն, որպես տեղական խռովության նախաձեռնողի, և մարմնական պատիժների ենթարկել հարևան ընտանիքներից ութ գյուղացու: Դրա համար էլ Գրիցկոն որոշեց ժանդարմներին այստեղ բերել:

— Իսկ ինչո՞ւ այստեղ,— հարցրին մեր գյուղացիները հորս:

— Տղան գիտեր, որ մենք պատժից վախենալու պատճառ չունենք, ապստամբությանը համակիր չենք:

Գյուղացիք հայացքները խոնարհեցին: Երկար ժամանակ լռություն էր տիրում: Ի վերջո Պեետեր Խյարման՝ ավանի տանուտերն, ասաց.

— Հնուց այդպես է եղել... Բայց եկեք գոնե որոշենք, թե հիմա ինչ ձեռնարկենք:

Կիզող արևից պատսպարվելով չինարու ստվերում՝ մարդիկ տեղնուտեղն ամեն ինչ վճռեցին: Այսպիսի տոթին ժանդարմները օրական երեսուն վերստից ավելի չեն կարող գնալ, մանավանդ եթե խելքներին փչի ճամփամերձ գյուղերում ևս դատաստան տեսնել: Այսպես, ուրեմն, նրանք Զապոլյե կժամանեն միայն երրորդ օրը: Մենք պետք է նրանց կանխենք և հաղորդենք մերոնց (այդպես էլ ասացին՝ մերոնց) սպառնացող փորձանքի մասին:

Էստոնացիներին անսովոր փութկոտությամբ սուրհանդակներ նշանակեցին, և Կուստին՝ Պուլվերսկի Յակի տղան, իր հովատակին հեծած, անմիջապես ճանապարհ ընկավ: Մի ժամ հետո Զապոլյե սլացավ Միկ Տաարին, որպեսզի, եթե առաջին սուրհանդակին չհաջողվի հանձնարարությունը կատարել, ինքն այդ անի: Ճաշի ժամանակ քրտնքի մեջ կորած ձիով սլացավ եկավ Միկը: Իբր Պուլվերսկու հովատակն սպանված է, իսկ ինքը Կուստին մի կերպ փրկվել է:

Ժանդարմները պահակային կետեր են դրել պարանոցի մոտ, այնտեղ, որտեղ հարավային Բուգը մոտենում է Վադիմսկի հովտին, և երկու բնակավայրերի միջև կապը կտրել են:

Մարդիկ ճնշված տեսքով կանգնել էին չինարիների մոտ:

Եթե Գրիցկոն չափահաս գյուղացիների կարեկցանքն էր հարուցել, ապա առավել ևս դուր էր եկել իր հասակակիցներին: Նա անհաղթահարելի ուժով ինձ դեպի իրեն էր ձգում, և մինչ մյուս տղաները լսում էին իրենց ծնողների մռայլ մտորումները, ես անգործ չէի կանգնել և, օգտվելով այն բանից, որ Գրիցկոն մեր տանն է գտնվում, շարունակ սենյակ էի վազում, մինչև որ վերջապես նրան ուշքի եկած տեսա: Նա նստել էր մահճակալին, ոտքերը կախ գցել:

— Ի՞նչ լուր կա,— հարցրեց ինձ ռուսերեն: Ի զարմանս ինձ, այդ տղան, որն ինձ համար արիության մարմնացում էր, բարալիկ, մանկական ձայն ուներ:

Ես ռուսերեն չգիտեի և ստիպված եղա դիմել շարժումների օգնությանը: Ձեռքս թափահարեցի, իբր գյուղի սահմաններից այն կողմ է տեղի ունեցել, հետո մատներով «սլացա» սեղանի մակերեսին, ասացի «պո՛ւֆ» և ետ «սլացա»: Գրիցկոն հասկացավ, որ նախազգուշացնել չի հաջողվել և հուսահատորեն ցնցեց իր խուճուճ, ձյութի պես սև մազերով գլուխը: Ապա խորհրդի սպասելով՝ իմ դեմքին հառեց իր ծակող հայացքը: Հետո նա մատնացույց արեց Վադիմսկի կողմը:

Սկզբում ինձ թվաց, թե նրան չհասկացա, հո չէ՞ր մտածում հովտով գնալ: Այնտեղ աճում է այն, ինչ այստեղ «մեռելախոտ» են անվանում: Եվ նույնիսկ մեր պապերի պապերը չեն հիշում այնպիսի դեպք, երբ մեկն ու մեկին հաջողված լինի թափանցել այնտեղ, ուր մնաց թե ամբողջ այդ ճանապարհը հաղթահարել:

Գրիցկոն նորից ձեռքով մյուս կողմը ցույց տվեց և բացականչեց.

— Վո՛վկ:

Տեղական գործածություն ունեցող այդ բառն ինձ ծանոթ էր, այնտեղ այդպես էին անվանում տափաստանային գայլերին: Ուրեմն՝ Գրիցկոն ուզում էր բացատրել, որ, չնայած ամեն ինչին, հարկավոր է կտրել-անցնել հովիտը, օգտագործելով, հավանորեն մեռելախոտի երևան գալուց շատ առաջ, գայլերի բացած արահետները, որոնք դարերով մնում են առանց խոտով ծածկվելու:

Ես այդ մտահղացումը մերժեցի:

— Գայլերի արահետների մասին մտածել իսկ չի կարելի: Դրանք այնքան նեղ են, որ ոչ մի մարդ դրանցով անցնել չի կարող:

Գրիցկոն մատով բոթեց իր կուրծքը:

— Չափահասը չի կարող, իսկ այսպիսի փոքր տղան կարող է:

Ես սկսեցի Գրիցկոյի հետ վիճել և նրան համոզել, որ մի քիչ գոնե շունչ առնի:

Ժամանակ չկա,— պատասխանեց:— Ժանդարմներն արդեն ճանապարհին են:

Երբեմն մտերմությունն ամրապնդվում է աստիճանաբար, մարդիկ տարիներով են հասունացնում այն իրենց երևակայության մեջ: Իսկ երբեմն էլ մտերմությունը զարգանում է շատ արագ, ոտքի վրա: Այդպես ստացվեց և մեզ մոտ:

Քանի որ Գրիցկոն որոշել էր ինչ գնով էլ լինի ճանապարհ ընկնել, ես կախիչից իջեցրի հաստ չուխան, որսորդական մեծ հրացանը, հաց դրեցի իմ հովվական մախաղի մեջ: Այնտեղ խոթելով նաև եղինջը քաղհանելու թաթմանները, նկատեցի, որ հուզմունքից երկու զույգ եմ դրել: Պարզվեց, որ հացն էլ շատ է՝ գյուղական բոքոնի կեսը: Էլ ինչ մտածելու բան կար. ես էլ չուխա հագա: Գրիցկոյի բուռն ձգտումը ամբողջ ուժով հաղորդվեց նաև ինձ, և ես արդեն նրան մենակ թողնել չէի կարող: Երկուսս էլ նիհար էինք և գայլի այդ արահետներով իսկապես որ միայն մենք կարող էինք

անցնել: Հարկավոր էր միայն շտապով ճանապարհ ընկնել, թե չէ կգային մեծերը և մեզ թույլ չէին տա վտանգել մեր կյանքը:

Բաց արինք Վադիմսկի հովտի կողմը նայող լուսամուտը և բակ թռանք: Նկատելով գոմի մոտի եղանը, Գրիցկոն դա էլ իր հետ վերցրեց, միայն թե չհասկացա, թե մեր ինչին էր պետք եղանը:

Մեր գյուղում բոլոր շինությունները՝ խրճիթները, մարագները, չարդախները, մի շարքի էին, իրար կպած: Դրանց հետևից թաքուն անցնելով, մտանք տարեկանի արտը և շտապեցինք դեպի այնտեղ, որտեղ Վադիմսկի հովիտը դառնում է երկար ցամաքալեզվակ: Խաղաղ եղանակներին նրա վերջում կարելի է լսել Զապոյեի աքլորների կանչը: Այստեղ հովտի լայնությունը հինգ վերստից ավելի չէ: Բայց գլխավորն այն էր, որ այստեղից էին սկսվում բազմաթիվ գայլային արահետները:

Մենք թաթմանները հագանք, գլխարկներս խոր քաշեցինք գլխներիս: Մի վերջին հայացք նետեցինք արեգակին և մտանք գայլային արահետներից ամենալայնը: Երկինքը մեր գլխավերևում անհետացավ: Մինչև երեկո վեց ժամ էր մնում. այդ ժամանակամիջոցում մենք պետք է հասցնեինք կտրել-անցնել հովիտը:

Մեր գլխավերևում խոտն այնքան խիտ էր, որ միայն ստվերներով կարող էինք որոշել, թե որտեղ է արևը, ինչպես և մեր ճանապարհի ուղղությունը: Իսկ դա իմանալը հատկապես կարևոր էր, քանի որ շուտով մենք հասկացանք, որ արահետները հովտի միջով ոչ թե ուղիղ են անցնում, այլ կեռմաններով, հաճախ՝ ճյուղավորված:

Սկզբում ճանապարհը բավական արագ էինք հաղթահարում: Մերթ ընդ մերթ թունելների կամարն այնքան ցած էր կախվում, որ մենք ստիպված էինք լինում չորեքթաթ կամ սողալով առաջ շարժվել: Մախաղը թիկունքին քարշ տալը դժվար էր, և այժմ առջևից գնացողը իր հետևից էր պարկը քարշ տալիս, իսկ հետևից եկողը եղանն էր քաշում: Քանի որ առջևից գնացողի համար ավելի դժվար էր, չէ՞ որ նա ստիպված էր սեղմել թափված մոլախոտը և կտրատել միահյուսված ցողունները, ճյուղավորումներում մենք տեղներս փոխում էինք: Այդ անում էինք գնացքների նման, շրջվելով դեպի հարևան ուղին: Գայլերի արահետներում աջ կամ ձախ քաշվելն անհնարին էր, թեև այստեղ սովորական խոտ էր բուսնում. երնջնակ, օշնան, օշինդր, ուղտափուշ: Այս բոլորը, ինչպես բանվածքի հենք, ամուր միահյուսվում էր խիտ մացառով: Ընդ որում այստեղ, գետի ցամաքած հունի մեջ, տղմոտ պարարտ հողի վրա, հարավային կլիմայի պայմաններում, ամեն ինչ արտակարգ փարթամ էր աճում: Ոչ մի ցողուն չկար, որ երկու-երեք մետրից ցածր և մանկան թևից բարակ լիներ: Ձեռք չկպած մոլախոտը շատ ուժեղ է լինում... Մի անգամ, երբ շրջադարձի տեղում եղանը խրվեց մնաց, փորձեցի կտրել ինձ խանգարող սագախոտը, բայց այն քարի նման պինդ էր: Երկաթե ձողը տաշելն ավելի հեշտ կլիներ: Եվ որպեսզի շրջադարձը անցնենք, ստիպված եղանք եղանի կոթը երեք քառորդով կտրել կարճացնել:

Բայց ոչ ամուր սագախոտը, ոչ հաստ արմատները, ոչ սուր ասեղնատերևները մեզ այնքան տառապանք չէին պատճառում, որքան դավադիր գայլուկը իր խաբուսիկ տեսքով: Բարալիկ տեսքով, թեթև ցանցի նման հյուսվում էր թունելի առաստաղին, տեղ-տեղ կանաչ բարձի նման փռվում գետնին, հրավիրելով հենվել իրեն: Բայց հենց որ դիպչում էիր, կառչում էր քեզանից իր հարյուրավոր օղակներով ու կառչակներով. ճանկում էր իր յուրաքանչյուր շիվով ու ցողունով: Դու թփրտում ես, կտրատում ես թելերը, ճիշտ ինչպես սարդոստայն ընկած ճանճ, բայց նա ռետինի նման ձգվում է քո հետևից, չցանկանալով դուրս թողնել իր կապանքներից: Դժվարությամբ մետր մետրի հետևից առաջ ես գնում, մինչև որ ոստայնը կտրատվում է, բայց քեզ արդեն խոտի նոր փունջ է սպասում:

Ես Գրիցկոյին խնդրում եմ.

— Հանգստանանք:

— Ժամանակ չկա,— պատասխանում է իր բարալիկ ձայնով,— նրանք ճանապարհին են:

Եվ մենք, հոգնածությունը հաղթահարելով, առաջ ենք սողում: Բայց նոր փորձություն էր մեզ սպասում. ծաղիկների շշմեցնող բույրը:

Ո՛չ հյուսիսային, ո՛չ արևադարձային երկրներում չգիտեն, թե ինչ է ծաղկի բույրը: Ծաղիկն ամենից ավելի ուժգին է բուրում հյուսիսի և հարավի միջև, այն լայնություններում, ուր տարածվում են նաև Պոդոլսկի տափաստանները:

Հայրս պատմում էր, որ այստեղ վերաբնակվելով, տան հետևը հնդկացորեն է ցանել: Սկզբում բակից առատ ծիլերին նայելը շատ ուրախալի էր: Բայց երբ հնդկացորենի կոկոնները հասունանալով սկսեցին պայթել, նրանց բույրն սպառնում է մարդկանց հեղձամահ անել: Լուսամուտները փակելն էլ չօգնեց, և ամբողջ ընտանիքը ստիպված եղավ տեղափոխվել Պետեր Սիմոնի մարագը: Իսկ մեր հարևան Սաս Կարուսը, գեղեցկության հետևից ընկնելով, դեպի տուն տանող ճամփին սպիտակ ակացիա տնկեց: Սակայն ծաղկելու օրերին ոչ մարդիկ, ոչ նույնիսկ շները չէին կարողանում այդ ծառուղով անցնել, միայն Կարուսի այծը, որի հոտոտելիքը բութ էր, անցնում էր, բայց նա էլ մկկալով ամբողջ թափով վազում էր:

Մեռելախոտի մեջ շատ ծաղիկներ կային: Նրանցից յուրաքանչյուրը, ինչպես բնությունն էր սահմանել, իր ժամանակին էր ծաղկում: Այժմ ուղտափուշն էր ծաղկել, որը, ուրիշ երկրներում տարբերվելով իր համեստ բույրով, այստեղ իր բազմաթիվ կոկոններից, որոնք ցածի մասերում ոզնու պես փշուր էին, իսկ վերին մասերում նման էին ծաղկազամբյուղների, այնպիսի մի բույր էր արձակում, որ օդը շիլայի նման թանձրանում էր: Այդ բույրը պարզապես մեզ խեղդում էր և, որքան մոտենում էինք հովտի կենտրոնին, ուր քամին չէր հասնում, այնքան ավելի հեղձուցիչ էր դառնում: Քթով շնչելը տանջալի էր, և մենք, ցամաքն ընկած ձկան նման, բերանով էինք օդը կուլ տալիս:

Գլուխներս պայթում էր, աչքներս շաղվում, գնալով ավելի դանդաղ էինք առաջ շարժվում և երեկոյան դեմ արդեն Ձապոլյե հասնելու հույս չունեինք: Մխիթարվում էինք այն մտքով, որ ժանդարմներն այսօր այնտեղ չեն հասնի: Երազում էինք միայն, որ գիշերը շուտ վրա հասնի: Այդ ժամանակ բուրող կոկոնների մեծ մասը կփակվի, և մենք կփրկվենք շնչահեղձ լինելուց:

Հայտնի չէ, թե ինչը կնախընտրեինք՝ ցերեկը, թե գիշերը, եթե նախապես իմանայինք, որ գիշերն էլ իր վտանգներն ունի:

Կենդանի էակներ ցերեկն էլ էին մեզ պատահում, բայց այդ խեղդուկի մեջ նրանք առանձին եռանդ չէին ցուցաբերում: Մեր շուրջը բզզում էին մեղուները, վրա էին տալիս բրետները, որոնց բույնը մեր ճանապարհին էր ընկած: Երբեմն բարկությամբ մեզ վրա փնթփնթում էին գերմանամկները, նրանցից մեկը նույնիսկ ատամներով ճանկեց ինձ: Առնետի մեծության այդ գազանիկը շատ հանդուգն է: Մեր աչքով ընկավ նաև ժանտաքիսի վայրագ մռութը:

Հետո հանկարծ, ինչպես լինում է հարավում, առանց մթնշաղի վրա հասավ գիշերը: Տանջող բույրը նվազեց, բայց դրա փոխարեն մեռելախոտի մեջ վխտալ սկսեցին զանազան կենդանիներ: Եվ առաջինը մեզ վրա գրոհեց դրանցից ամենափոքրը՝ մոծակը: Դա այն սովորական տզտզանը չէր, որ ձեռքով քշում ես խավարում և վերջ: Հիմա նա վեր էր ածվել աներես արնախումի, որի պետքն էլ չի, որ դու ոչնչացրել ես նրա հազարավոր եղբայրակիցներին: Այդ արարածները ամպի նման էին վրա տալիս, հաստ շերտով ծածկում մեր դեմքը, խցկվում աչքներս, քթներս, բերաններս: Թևքերի և օձիքի միջով տափանցելով շապկի տակ, խայթում էին, ծակում և ամբողջ մարմնիդ մեջ եռուքոր առաջացնում:

Լսում էինք նաև, թե ինչպես են մեր հետևից և առջևից արահետով սողում իժերը: Նրանք իհարկե մարդու վրա չեն հարձակվում, բայց լպրծուն զրահներով այդ մոլի որսորդները՝ գլխապատառ նետվում են միջատների, մկների ու մողեսների վրա և մեզ, որ հանդիպում էինք նրանց ճանապարհին, թեկուզև պարզ պատահականությամբ, այնուամենայնիվ, մահացու խայթոց էր սպառնում:

Սակայն շուտով օձերն անգամ մեզ չնչին դժբախտություն թվացին: Սկզբում հեռվից, հետո ավելի ու ավելի մոտիկ ոռնոցներ ու գռմռոցներ հասան մեր ականջին: Այդ ձայներից սահմռկեցուցիչ դարձավ անթափանց խավարը, որից փախչելն անգամ անհնարին էր: Ես զգում էի, թե ինչպես են գլխարկիս տակ մազերս բիզ-բիզ կանգնում: Մեռելախոտի մեջ գայլեր էին թափառում:

Տափաստանային շիկամորթ գայլերը, որոնք անձավներում են ապրում, գորշ, անտառային գայլերից փոքր են: Ցերեկը, թերևս, երկու հոգուն ձեռք չտան, իսկ արդեն գիշերը, մանավանդ երբ ոհմակով են, սարսափելի են դառնում: Դեռ վերջերս նրանք մի ամբողջ ոչխարի հոտ հոշոտեցին և մի ձի խեղդեցին, իսկ անցյալ ձմռանը Տաարիի ընտանիքից տարան փոքրիկ Կայեին...

Բոլորովին մոռանալով գայլերի մասին, մենք կարծում էինք, թե գիշերն էլ կարող ենք կամաց-կամաց շարունակել մեր ճանապարհը: Բայց ոռնոցը լսելով կանգ առանք: Ստիպված էինք նախապես պաշտպանվել: Նրանք մեզ կարող էին մոտենալ միայն անցքով: Մեկ էլ տեսար ոտքերս կծոտելով պոկեցին կերան (ես հետևից էի գնում), իսկ ես տեղիցս շարժվել անգամ չեմ կարող: Բայց իմ ձեռքին էր եղանը, որ քարշ էի տալիս իմ հետևից, և ես մտովին շնորհակալ եղա Գրիցկոյին նրա հնարամտության համար: Պաշտպանվելը շատ ավելի դժվար կլիներ Գրիցկոյի համար: Վերջ ի վերջո նա հնարը գտավ, տերևներ, չոր խոտ հավաքեց և գունդ անելով փակեց իր առջևի ճանապարհը. այդպես է գիշերն իր բնում փակվում նաև սկյուռը: Այդ գնդի մեջ ցցեց դանակը. նրա սայրը պետք է որ վախեցնի գիշատչին:

Երբ հսկայական աշխատանքով այդ չնչին պատնեշը սարքելը Գրիցկոն ավարտեց, ես հացի բոքոնից երկու պատառ պոկեցի: Մենք ծամում էինք հացը և բարձրաձայն շաղակրատում, որ քուններս չտանի: Թեև ամեն մեկս իր մայրենի լեզվով էր խոսում, այնուամենայնիվ հասկանում էինք, որ մեզանից յուրաքանչյուրը մտովին հայրենի գյուղում է: Անսահման թանկ էին թվում նրանք այժմ մեզ և անբաժանելի...

Մեզ համար աննկատելի քնեցինք: Արթնացա գլխիս հասած թեթև հարվածից: Դժվարությամբ աչքերս բանալով հասկացա, որ Գրիցկոյի կոշիկի ծայրն էր կպել: Երբ Գրիցկոն դեպի ինձ շրջվեց, տեսա, որ այտերն ուռել են, և հասկացա, թե սեփական աչքերս ինչու ինձ այդպես փոքր թվացին:

Բայց այնուամենայնիվ ի՞նչը փրկեց մեզ գայլերից, մի՞թե եղանն ու դանակը: Եվ ես հիշեցի մեծահասակների պատմությունները. ոչ թե եղանի ու դանակի սայրը, այլ հենց երկաթը, որ հազարավոր տարիներ նենգ գիշատիչների մոտ մարդու հանդեպ հարգալից ահ է առաջացրել: Գիշերը, երբ ծաղիկների բույրը թուլանում է, երկաթի հոտն ավելի ուժեղ է լինում:

Այժմ, երբ գայլերի ոռնոցը հանդարտվել էր, և արշալույսի ալ առկայծումը ցույց էր տալիս, որ արևը դեռ չի ծագել, ես խնդրեցի, որ Գրիցկոն թույլ տա ավելի երկար հանգստանամ: Նրա պատասխանը նախկինն էր:

— Ժամանակ չկա, ժանդարմները մեզ կարող են կանխել:

Անցուղիները սեղմում էին մեզ վերևից, հիմա առաջ էինք գնում միայն սողալով: Խոնավ փոսերը, որ հաճախ հանդիպում էին մեր ճանապարհին, վկայում էին, որ մենք դեռևս հովտի կենտրոնում ենք գտնվում: Կեսօրին հաստ մացառների թավուտում առվակ հայտնաբերեցինք: Մոլագարի նման վրա պրծանք ու խմեցինք: Ես կրկին ու կրկին գլուխս խոթում էի թարմացնող բարալիկ հոսանքի մեջ, ջուր էի լցնում պարանոցիս, մինչև որ Գրիցկոն բղավեց.

— Գնացի՛նք, Ելկա,— և առաջ սողաց:

Թեք լանջին, հովտի մյուս կողմում, այլ խոտերի հետ միասին աճում էր նաև տատասկ: Նրա փշերն ասեղների նման ծակում էին, ո՛չ ավելի ճիշտ՝ մախաթի նման, որն ամեն հյուսվածք կարող է ծակել: Կարճ ժամանակամիջոցում մեր հագուստն ամբողջովին քրքրվեց. չէ՞ որ անցուղիները գնալով նեղանում էին: Վերշոկ վերշոկի հետևից առաջ էինք շարժվում: Երկրորդ գիշերը վրա հասավ մեռելախոտի մեջ: Երազումս ես տեսա Ռոստիսլավ Վոյտինսկուն, նա կանգնած էր հրացանների փողերի դեմ: Արթնանալով, թեև շատ կարճ էր տևել հանգիստը, անհամբեր սպասում էի արշալույսին, որ ճանապարհը շարունակենք:

Ճամփորդության երրորդ օրը առավոտվա լռության մեջ մեզ հասավ Զապոլյեի նախրի մնչոցը: Արդեն երկու ժամ սողում էինք, երբ Գրիցկոն, որ այժմ առջևից էր շարժվում, սկսեց ավելի հաճախ կանգ առնել, մինչև որ մրմնջաց.

— Էլ չեմ կարող... Դու առջևից սողա:

Ես նրա վիճակը հասկանում էի: Իմ գլուխը ևս պարզապես պայթում էր, ուռած կոպերի տակ աչքերս կծկծում էին, տատասկների ծակոցներից մարմինս կրակված այրվում էր, ծարավն ու քաղցը տանջում էին. հացը դեռ երեկ էր վերջացել: Դրան ավելացրած և այն, որ Գրիցկոյի թիկունքը մտրակի հարվածներից ամբողջովին վերքերով էր ծածկված:

Մացառուտում ճյուղավորվող անցքեր չկային, սովորական ձևով տեղներս փոխել չէինք կարող, և ես ստիպված էի Գրիցկոյի վրայով առաջ խցկվել: Զգուշությամբ սողացի նրա ոտքերի վրայով, հետո՝ թիկունքով, ծվատվելով վերևից կախված տատասկներից: Բայց երբ հասա նրա ուսերին, նա խղճալի տնքաց, ու սսկվեց: Մարմինը թուլացավ:

— Գրիցկո՛,— բղավեցի:

Նա չշարժվեց:

— Գրիցկո՛,— բղավեցի ուղիղ ականջի մոտ: Ոչ մի պատասխան: Նա գիտակցությունը կորցրել էր: Զարմանալի չէր, նույնիսկ՝ հաստ չուխայի տակից զգում էի, որ նա կրակի նման ամբողջովին այրվում է:

Նրան մենակ թողնել չէի կարող, երկօրյա ճամփան այս մացառուտներ ով ինձ արդեն համոզել էր, որ ոչ ոք նրան այստեղ չի գտնի: Եվ հետո գայլերն էլ հազիվ թե խնայեն գիտակցությունը կորցրած մարդուն:

Հուսահատությունից սկսեցի գործել ինչպես կարող էի: Սողալ անցնել Գրիցկոյի վրայով անմիջապես չէի կարող, վերադարձի ճանապարհ չէի ունենա: Բոլոր ուժերս լարելով և մացառները ետ քշելով, անցքը մի քիչ լայնացրի: Հիմա կարելի էր հովվական մախաղը առաջ բերել և դնել Գրիցկոյի կրծքի տակ: Հետո նրան սանձափոկերով կապեցի մախաղին. լավ է, որ ամեն հովիվ միշտ իր մոտ փոկ է ունենում: Վերջապես սողացի անցա Գրիցկոյի վրայով. սանձափոկերը փաթաթեցի դաստակիս և ընկերոջս քարշ տվեցի իմ ետևից: Գայլուկների, փշերի և տատասկների միջով...

Արժե՞, արդյոք, պատմել մեր ճանապարհի ամենադժվարին հատվածի մասին: Ես ի վիճակի չեմ: Երբ մերթ ընդ մերթ գիշերը երազիս երևում է, ես սարսափած արթնանում եմ, և սիրտս թպրտում է կրծքիս տակ, թեև այն ժամանակներից արդեն կես դար է անցել:

Բայց ահա արահետն սկսեց լայնանալ: Ես կարողացա ծնկներիս վրա բարձրանալ, վերջապես ոտքի կանգնեցի: Փորձեցի բղավել, բայց կոկորդս ասես բռնվել էր: Վերջիվերջո փորձս հաջողվեց, սակայն ձայնս այնպես սարսափելի հնչեց, որ նույնիսկ մարմնովս դող անցավ: Ի պատասխան՝ շների խառնիխուռն հաչոց լսվեց: Սակայն դրանից հետո տեղի ունեցած բոլոր դեպքերը ասես հիշողությունիցս դուրս են ընկել:

Ասենք որոշ բաներ պարզ տպավորվել են: Ես պառկած եմ մի մեծ սենյակում թախտին: Դիմացը՝ անկյունում, սրբապատկեր է կախված, որի առաջ լամպ է վառվում: Փողոցից պայտերի կտկտոց ու վազվռտուք է լսվում: Դռներ են շրխկում: Խմբով սենյակ են ներխուժում մարդիկ, բոլորի առջևից՝ արդեն ինձ ծանոթ ճլորած սպան, նրա կողքին անմիջապես ցցվում է հաստ ուրյադնիկի կերպարանքը...

— Ուրեմն՝ ծլկե՞լ են,— հարցնում է սպան:

Ուրյադնիկը ձեռքը հովարին դնելով և աչքերը չռելով ծղրտում է.

— Ճի՛շտ այդպես, ինչպես որ հրամայում եք, ձերդ գերազնվություն, ծլկել են: Գրիցկոն նրանց նախազգուշացրել է:

Սպան խթանները զրնգացնելով մոտենում է դիմացի պատի մոտի թախտին: Ես գլուխս բարձրացնում եմ և տեսնում, որ ինչ-որ մեկն այնտեղ պառկած է: Նրա քիթն անբնական մեծ է, ուռած այտերը բուլկի են հիշեցնում, իսկ ականջներն իսկական եփած խնձորի են նման: Եվ միայն ձյութի նման սև խոպոպներից եմ կռահում, որ Գրիցկոն է:

— Էլի՞ դու,— սպան ժպտալով կանգնում է նրա կողքին, աջ ձեռքը տանում ատրճանակի պատյանին:— Եվ նույնիսկ քեզ համար ուղեկցո՞ղդ ես գտել:

— Գտել եմ,— հնչում է բարալիկ ձայնը:

— Այդ ինչպե՞ս անցաք:

— Մեռելախոտի միջով:

Սպան, ըստ երևույթին, չհավատաց, թե որևէ մեկն ընդունակ կլինի այդ անելու: Երբ հակվեց թախտերին, խավար սենյակին արդեն վարժված նրա աչքերը նախ Գրիցկոյի, հետո իմ դեմքը տեսան: Ժպիտը վայրկենապես անհետացավ նրա դեմքից: Ձեռքը ատրճանակի պատյանից պոկելով, նա խաչակնքեց և շտապով փողոց նետվեց: Նրա հետևից վազեց նաև ուրյադնիկը:

Այժմ արդեն բոլոր գյուղացիները մեր շուրջը հավաքվեցին: Կարմիր շրջազգեստով մի կին իմ վրայի վերմակն ուղղեց, կանաչ վերնաշապիկով մի գեղջուկ ջուր տվեց, երկար հյուսով անծանոթ մի աղջիկ, արմունկով իմ մահճակալի թիկունքին հենված, նայում էր ինձ:

Ես նորից քնեցի, բայց արդեն հանգիստ քնով, գլուխս բարձր բարձին, տանտերերի տանիքի տակ:

1917 թվականին մենք Պոդոլյայից մեկնեցինք: Երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ ես Էստոնիայում էի և բնակություն հաստատեցի այնտեղ: Շատ տարիներ հետո թերթում կարդացի, թե Վիննիցայի մարզի ինչ-որ միլիոնատեր կոլտնտեսություն իր աճեցրած ցորենի սորտի համար Մոսկվայի համամիութենական գյուղատնտեսական ցուցահանդեսում ոսկե մեդալ է ստացել: Եվ այդ կոլտնտեսության նախագահն է Գրիգորի Վոյտինսկին... Չլինի՞ թե նույն այդ Գրիցկոն է: Ըստ անցած տարիների նա հիմա հավանորեն ծեր է: Հետո, այժմյան Վիննիցայի մարզը համարյա նույն այն նախկին Պոդոլսկի նահանգն է:

Իմ մեջ վերակենդանացան մանկության հուշերը: Հիշեցի մեր արշավը և թե ինչպես ավելի ուշ մեր գյուղերը համատեղ ուժերով մեռելախոտի միջով ճանապարհ բաց արին: Եվ ես թերթում հիշատակված կոլտնտեսության նախագահին նամակ ուղարկեցի, որով շնորհավորում էի նրա պարգևը և հարցնում, թե ինչպես են այդպիսի լավ բերք ստացել, իսկ գլխավորը, թե նա արդյոք հենց իմ այն բարեկամ Գրիցկոն չէ՞, կտրիճ այն տղան: Թող ինձ ավելի մանրամասն գրի:

Ի պատասխան ստացա մի հեռագիր, որը բերում եմ բառացիորեն. «Ես հենց նույն այդ բարեկամդ եմ, այն կտրիճ տղան: Վերջակետ: Պարգևատրման արժանացած ցորենի սորտն աճեցրել են Զապոլյեի կոլտնտեսության և էստոնական գյուղի բրիգադիրները այժմ վարելահողի վերածված Վադիմսկի հովտում: Վերջակետ: Որպեսզի մարդկային մտերմությանը չխանգարեն ո՛չ գայլերը, ո՛չ մեռելախոտը: Վերջակետ: Ավելի մանրամասն նամակը հետո, իսկ հիմա ժամանակ չկա: Վերջակետ: Գրիցկո»: